

Մարգարետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքն ԱԺ արտահերթ ընտրությունների կապակցությամբ

11.12.2018



Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն արտահերթ խորհրդարանական ընտրություններում բոլորիս ունեցած հաղթանակի համար: Մա այն հաղթանակն էր, որով ամրագրվեց նոր Հայաստանի իրողությունը:

Այո, Հայաստանի Հանրապետության անկախ և արդարամիտ քաղաքացին դեկտեմբերի 9-ին իր գիտակցված քայլն արեց հանուն այն երկրի, որն ունենալու ցանկությունը երազանք է եղել բոլոր սերունդների համար:

Մեզանից յուրաքանչյուրը, անկախ սոցիալական կարգավիճակից, զբաղեցրած պաշտոնից ու քաղաքական հայացքներից, պետք է օգտվի այս պատմական իրադարձությունից և իր մասնաբաժինն ունենա հայրենիքի շենացման գործում:

Ես վստահ եմ, որ նորընտիր Ազգային ժողովն ու կառավարությունը բացառիկ դերակատարում կունենան մեր համընդհանուր նպատակին հասնելու ճանապարհին: Աստված օգնական բոլորիս: